ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019թվականի N 14

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 3-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝

1. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին:
2. Հողի հարկի գծով արտոնություն տալու մասին:
3. Համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենան օտարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ Կողմ.

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ Կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ Կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ Կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019թվականի N 15

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը նիստի մասնակիցներին ներկայացրեց 2019 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարողականը: Նշեց, որ հողի հարկի և գույքահարկի գանձումների ցածր ցուցանիշները պայմանավորված է նրանով, որ հարկատուները հիմնականում իրենց վճարումները կատարում են տարվա վերջին ամիսներին: Հավաստիացրեց, որ հարկերի հավաքագրման գործընթացը կարագացվի և 2019 թվականի բյուջեն կկատարվի:

Առաջնորդվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին ընդունել ի գիտություն:/Հաղորդումը կցվում է/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ Կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ Կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ Կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ Կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

Դիմիտրով համայնքի 2019թ. բյուջեի 1-ին եռամսյակի եկամուտների կատարողականը

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Կատարող-ականը (հազ.դրամ)	Փաստացին պլանի եկատմամբ
Համայնքի բյուջե մուտքագրվող գույքահարկ	4,031.00	585.40	14.52%
Հողի հարկ համայնքի տարածքում գտնվող հողի համար	3,500.00	233.30	6.67%
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	214.60	104.10	48.51%
ՊԵՏ.ՐԵՏՅ ՖԻՆ. ՀԱՄԱՀԱՐԹ. ՍԿՋԲ-ՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎ. ԴՈՏԱՑԻՆԵՐ	22,460.50	5,615.10	25.00%
ԳՈՒՅՔԻ ԿԱՊԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	363.50	7.00	1.93%
ԿԱՊԻՏԱԼ ԳՈՒՅՔՈՒՄՆԵՐ	1,716.00	232.80	13.54%
ԸՆԴԱՄԵՆԸ	32,286.60	6,777.70	20.99%

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով

Առաջատար մասնագետ /հաշվապահ/ Հ. Թադևոսյան

Դիմիտրով համայնքի 2019թ. իյուլեի 1-ին եռամսյակի ծախսերի կատարողականը

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (դրամ)	Փաստացի ծախսը (դրամ))	Ծախսը պլանի նկատմամբ
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Արտաքին լուսավորություն/ (900412167083)	950000.00	0.00	0.00%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Գրադարանային ծառայություններ/ (900412000813)	900000.00	148000.00	16.44%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Կառավարման մարմնի պահպանում/ (900412217029)	16505100.00	2987500.00	18.10%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Հաս.կթ.գնահ.աջակց./ (900412167166)	20000.00	0.00	0.00%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Մայրուղ և փողոցների վերակառ/ (900412167232)	3145783.00	0.00	0.00%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Մշակութային միջոցառումների իրականացում/ (900412000797)	900000.00	148000.00	16.44%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Նախադպրոցական ուսուցում/ (900412254022)	7329500.00	1198500.00	16.35%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Պահուստային ֆոնդ/ (900412167109)	2648000.00	0.00	0.00%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Սանիտարական մաքրում/ (900412167075)	2000000.00	180000.00	9.00%
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔ /Սոց.ապահովություն անձանց աջակց./ (900412167175)	886000.00	0.00	0.00%
ԸՆԴԱՄԵՆԸ	35284383.00	4662000.00	13.21%

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով

Առաջատար մասնագետ /հաշվեկշիռ՝ Հ. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019թվականի N 16

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և նկատի ունենալով , որ Վանիկ Մկրտչյանը սեփական 0.43 հեկտար/ծածկագիր 03-038-202-001/ վարելահողի վրա հիմնել է նոր կորիզավոր այգի, Հենրիկ Եղիազարյանը թիվ 03-038-0125-0001 ծածկագրի տակ գտնվող 11.6015 հեկտար վարելահողի 2, 0 հեկտարի վրա հիմնել է խաղողի այգի , համայնքի ավագանին որոշում է՝

1. Վանիկ Մկրտչյանին տալ հողի հարկի գծով արտոնություն և ազատել 2019-2022 թվականներին հողի հարկից սեփական 0.43 հեկտար վարելահողի վրա նոր կորիզավոր այգի հիմնելու կապակցությամբ: Նշված հողատարածքը հարկել որպես կորիզավոր այգի 2023 թվականից:

2. Հենրիկ Եղիազարյանին տալ հողի հարկի գծով արտոնություն և ազատել 2019-2021 թվականներին հողի հարկից սեփական 11.6015 հեկտար վարելահողի 2.0 հեկտարի վրա նոր խաղողի այգի հիմնելու կապակցությամբ: Նշված հողատարածքը հարկել որպես խաղողի այգի 2022 թվականից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019թվականի N 17

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պարզաբանում

Համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 26-ի <<Գույք օտարելու մասին>> թիվ 29-Ն որոշման համաձայն համայնքի ղեկավարը երկու անգամ կազմակերպվել է ծառայողական ավտոմեքենայի աճուրդ-վաճառք 1328.0 հազար դրամ մեկնարկային գնով: Երկու աճուրդները համարվել են չկայացած հայտ չներկայացնելու պատճառով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Դիմիտրովի համայնքապատարանի տնօրինության տակ գտնվող ՎԱԶ 21074 մակնիշի ծառայողական ավտոմեքենան իջեցված գնով օտարելու մասին և նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախկինում սահմանված մեկնարկային գնով ավտոմեքենան չի օտարվել, համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիմիտրովի համայնքապետարանի տնօրինության տակ գտնվող ՎԱԶ-2107 մակնիշի, 063LL70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենան օտարել աճուրդով:
2. Սահմանել գույքի վաճառքի մեկնարկային գինը՝ 1062.0 հազար դրամ:
3. Դիմիտրով համայնքի ղեկավարին.

1) աճուրդի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով հրապարակել ընդհանուր տեղեկություններ գույքի, աճուրդի անցկացման պայմանների, ժամկետների, գույքի արժեքի որոշման հետ կապված վճարների, աճուրդի մասնակիցներին ներկայացվող պահանջների մասին,

2) ավտոմեքենայի օտարման գործընթացի ավարտի վերջնաժամկետը՝ 20.12.2019 թվական,

3) աճուրդի հաղթողի(այսուհետ՝գնորդ) կողմից առաջարկված գնի արժեքի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքել առուվաճառքի

պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել ավելացված արժեքի հարկը, ինչպես նաև գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը՝ օրենքով սահմանված կարգով.

4) ճուրդի մասնակցության նախավճարը սահմանել աճուրդով օտարման ենթակա գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Գնորդի մուծած նախավճարը ներառել առաջարկվող գնի մեջ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ